

# ՀԱՅ ՍԿԱՒՈՒՏ

ՊԱՏԿԵՐՍԱԶԱՐԴ ԿԻՍԱՎՄՍԵԱՅ ԹԵՐԹ

Ֆրանսա . . . . .	25 Ֆր.
Սուրիա, Յունաստան, Պալքաններ . . . . .	20 Ֆր.
Միւս բոլոր երկիրները . . . . .	30 Ֆր.

(Վեցամսեայ չունինք)

ՀԱՏԸ ԶԵՌՔԷ 1.25 Ֆր.



## Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Դ

Սկաուտական վերին Մարմնոյն եւ « ՀԱՅ ՍԿԱՒՈՒՏ » ին վերաբերեալ դըրամ, ապահովագրուած նամակ, յօդուած, քղթակցութիւն, զրկել հետեւեալ հասցէով՝

Mr. M. KURKDJIAN  
39, Rue Maubeuge,  
PARIS (9°)



Ի գիտութիւն կը տեղեկացնենք « Հ. Մ. Ը. Մ. » ի Պալքաններու, Սուրիոյ Շրջանային ու Տեղական վարչութիւններուն, Սկաուտական Շրջանային Գործադիր Մարմիններուն ու Տեղական Սորհուրդներուն թէ Միութեանս հիմնադիր անդամ, Ազգային Պետ՝ Նդր. Գ. Յակոբեան շատ մօտիկ տպագայի մը մէջ քննական այցելութիւններ պիտի տայ՝

Ռումանիոյ, Պուլկարիոյ, Յունաստանի ու Սուրիոյ բոլոր Մասնաճիւղերուն :


Մանրամասնութիւնները պիտի տեղեկագորուին առանձին նամակով :

« Հ. Մ. Ը. Մ. » ի ՍԿԱՒՈՒՏ. ՎԵՐԻՆ ՄՍՐՄԻՆ



# ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻՆ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ « Հ . Մ . Ը . Մ . » Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
Հ Ի Մ Ն Ե Ա Լ 1918



## HAÏ SCOUT

REVUE BI-MENSUELLE DES SCOUTS ARMÉNIENS

FONDÉE EN 1918

15 JUIN 1<sup>re</sup> ANNÉE, No 5 — 1934 — ՅՈՒՆԻՍ 15 Գ. ՇՐՋԱՆ, Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 5

### “ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻՆ”

« ... Նահանջն է ան : Նահանջը, նահանջը Հայերուն : Կոխը սրբազան բան է նահատամարտը երբեմն նոյն իսկ օգտակար . անոնցմէ ազգ մը դուրս կուգայ : պարտուած կամ յաղթական . սակայն երկու պարագային ալ դուրս կուգայ — Բայց նահանջը հոգիներու , գլխի պտոյտ տուտ գառիքափին վրայ սա նահանջը կը ջնջէ կը յուզէ . կ'անհետացնէ ամէն բան :

Իրա՛ւ , բազմաթիւ շեն այսպիսի զարգացած անտարբերներ , սակայն անդին կան ամբոյսները անցնող անմիտ եւ ուժացած մարդոց որոնք կարծես բնագղաբար , կարծես արիւնով ու ծուծով նիշդ նմանն են նախորդին : Անոր պէս տուաջիւնը կ'ըլլան ընկրկող , մոռցող , ուրացող : Եւ կ'կազմուի ահե՛ղ գանգուածը անոնց որոնք կը նահանջեն ու այդ մեծ հոսանքին մէջ կը բշեն կը տանին միւսներն ալ : Յանցառ բացառութիւններն ալ :

« Կը նահանջեն ծնողք , որդի , բեռի . փեսայ , կը նահանջեն բարք , ը՛բոնում . բարոյական , սէր : Կը նահանջէ լեզուն : Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով , կամայ եւ ակամայ , գիտութեամբ եւ անգիտութեամբ , մեղա՛յ , մեղա՛յ Արարատին :

« Եղան Հայեր որոնք հրեց մորթո փրկելու համար վնասեցին ոսկի . եղան ուրիշներ որոնք տուին հաւատք , կուսութիւն , եղան անոնք որոնք լքեցին տուն տեղ , երկիրն . եղան դեռ վատեր՝ որ ուրացան ազգ ու լեզու , եւ հերոսներ՝ որ տուին արիւն , կեանք , օր ու արեւ : Իսկ մե՛նք , կը վնասենք իբրեւ վերջին փրկագին այն որ պիտի գայ : Իբրեւ վերջին փրկագին՝ մանուկներ որոնք կրնային մեծնալ , ապագայի սերունդներ որոնք մեզմէ վերջ պիտի գային :

Որովհետեւ այն որ պիտի գայ , պի .



տի ըլլայ օտար, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին » :

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ  
« Նահանջը տասնց երգի »

« Հայ Սկաուտ » ին կոչումն է դադարեցնել նահանջը իր արմատէն :

Օգնէ՛ իրեն, գաղափարակից սրտցա երիտասարդ Հայ :

« ՀԱՅ ՍԿԱՈՒՏ »

Ուճատ, 30 - 5 - 934

Սիրելի եղբայրներ,  
Այս առաւօտեան լրաբերով ստացայ « Հայ Սկաուտ » ի 15 ընթացիկ թուագրեհալը . . . :

Ձէի կարող երեւակայել կամ երագել՝ նման ուրախութիւն, այս հեռաւոր, օտար անկիւնը հիւանդ պառկած վիճակիս մէջ :

Հիւանդին մտերիմ ընկերը ընթերցանութիւնն է : Մանաւանդ, երբ ան ըլլայ ու խօսի, իր սրտին թագուն զգացումներուն :

Կարդացի անյագօրէն ամէն մէկ գիրը « Հայ Սկաուտ » ի իմ ցեղակից եղբայրներու՝ գրուած անուշ, պարզ եւ խնամեալ ռնով օգտակարութիւններու շուրջ :

Եւ պահիկ մը տարուած անցեալի երանելի, թանկ յուշերէն՝ ակամայ բայց ստիպուած եւ՝ մղուած ներքին ուժէ մը անտեսանելի, արտասուքի գոյգ կաթիլներ հոսեցան կարկամած աչքերէս :

Եւ արդ երախտագիտական ջերմ ըզգացմամբ կուգամ ի խորին սրտէ շնորհակալութիւններս յայտնել ձեզ որ գիտցաք ամենայն սիրով ինձ մխիթարական ժամեր պարգեւելու, մանաւանդ ինձ նման հիւանդ դժբաղդին : Որովհետեւ « Հայ Սկաուտ » ը, մխիթարութիւն նուիրող կոնդակ մըն է ամէն անոնց, որոնք պատեհութիւնը ունեցած են ծառայելու, իր նուիրական կոչումին :

Դժբախտաբար, ջերմիս պատճառաւ,

ստիպուած եմ ընդհատել գրութիւնս :

Հանեցէ՛ք ընդունիլ շնորհակալական սրտագին եւ ջերմ զգացումներս՝

×

ՁՕՆ ԱՌ « ՀԱՅ ՍԿԱՈՒՏ »

— օօ —

Օտար ափերուն դո՛ւ պարծանք հայուն,  
Հայ խոցոտ սրտին, խանդաւէտ գարուն,  
Իմ գրիչով տկար, կուգամ քեզ այսօր՝  
Չօնել մաղթանքներ՝ սրտովս վիրաւոր :  
Խոնա՛րի եւ անձայն՝ մանիշակի պէս  
Թագնուած ետին անունիդ քու հեզ,  
Հրաւէ՛ր կը կարդաս ցեղիդ պատանեաց,  
Հետեւիլ՝ գործիդ, վարքիդ փառապանծ :

Մինչ այդ՝ օրէ օր անյաղք, անվրդով,  
Կը սփռես չորսդիդ, խանդ, պարծանք,  
կորով .

Կ'երթաս մի՛շտ յառաջ, դու չե՛ս մնար ետ :

Եւ առասպելի ասպետին նման  
Ո՛վ հայ սկաուտ եղբայր սիրական,  
Դու պիտի գտնես՝ խրախոյս, պերճանք,  
Երբ օտար ափէն « Մեր Երկիրն » երթանք :

Կը մաղթեմ հոգւով, որ անգուգական  
Այդ օրը՝ շո՛ւտ գայ, փայլո՛ւմ մոգական :

ՊԵՏՐՈՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ուճատ (Մարօք) Լեզէոնական



# ԻՆՉՊԷՍ ԿԸ ԹՌՉԻ ՕԴԱՆԱԽԸ

Իր բարձրագույն արշաւաններէն ոմանց ընթացքին, սկսուեալ ճանդիպում է աւագուտ ճամբաներու: Առաւելագոյն ծովեղերեայ բանակումներու սահուն, երբ տաք արեւը չորցուցած է աւազի վերին շերտերը, քաշել վաղել բաւական դրժուարին ու ծայր աստիճան յոգնեցուցիչ է: Ու երբ կտրելիք աւագոտ տարածութիւնը կարճ է, աւազի մէջ մխրճումները գեո տանելի են, հաճելի եւ գուարճալի: Բայց երբ նա երկար է՝ յուսահատական:

Քաշել ուրեմն շատ աւելի դիւրին է կարծր գետնի վրայ քան լայրձուն: Քաշել կարելի է շնորհիւ սաքի յատակին դէմ գետնին ցոյց տուած ընդդիմութեան: Առանց հպումի, առանց յենարանի քաշել հեռեւարար անհնար է:

Քանի որ կարծր գետնը ու աւագուտ տարրեր տարրեր ազդեցութիւններ ունին քայլերու յառաջացման վրայ, օդանախի թռիչքը բացատրելէ առաջ, անհրաժեշտ է դիտնալ թէ ի՞նչ սյօքերու կ'ենթարկուի օդին պէս նոսր տարածութեան մը մէջ մխրճուած մարմին մը:

Եթէ պատահած է ձեզ որ, տախտակի մեծկակ կտոր մը, կամ խոշոր, խաւարարի մէջ փաթթուած յուսանկար մը, մէկ խօսքով մեծ մակերեսով առարկայ մը ձեռքերնիդ վազել, դիտած ըլլալու էք որ, հովի ազդեցութեամբ, կամ վազքի պատճառաւ, ձեր բռնած առարկային վրայ յառաջ եկած օդի ճնշումին պատճառաւ, երբ անոր բարակ կողմը, այսինքն օդին ամենանուազ ընդդիմութիւն ցուցնող մասը, ամուր ու շիփ շիտակ հովի ազդութեան գուղահեռարար բռնուած չէ, ինչպիսի կամ անուազն շրջուելու փոստիկն ենթարկուած էք: Ու որքան տախտակի կտորը, առարկային մակերեսը մեծ

է, նոյնքան շրջող այդ սյօքը աւելի զօրեղ: Ու այսպէս դեռ շատ մը օրինակներով, ինչպէս առաջատանաւերու շարժումները, հողմադաշներու դարձը, անխնամ ու հովի ազդութիւնը նկատի չառնուելով հաստատուած վրաններու տապալումը, եւ այլն, եւ այլն, ցոյց կուտան օդի ընդդիմադրութեան սյօքը զորս կ'օգտագործուի թռիչքի համար:

Օդը շունենալով մեծ տեսակարար ծանրութիւն (տանսիթէ) ու ըլլալով դերհեղուկ մը (ֆլիւիտ), իր յառաջ բերած սյօքը համեմատական է, իր մէջ մխրճուած մարմնի մակերեսին մեծութեան: Որքան մեծ է այդ մարմնին իր շարժման ազդութեան ճակատած մակերեսը, այնքան մեծ է անոր վրայ եղած ճնշումը օդին:

Աւելի հասկնալի դառնալու համար վերագառնանք մեր աւագուտ ճամբան: Երբ փորձենք քաշել մատնեբու ծայրերուն վրայ, որով մեր մարմնոյն ծանրութիւնը ալ աւելի փոքր մակերեսով փոխանցած կ'ըլլանք աւազին, այս վերջինը աւելի մեծ չափով աւելի կուտայ ու քաշելը կը դառնայ ալ աւելի յոգնեցուցիչ՝ դժնդակ:

Փոխադրութիւնք դէպի լեռները, հոն, լեռնականները, ձիւն ձմեռին, երբ բոլոր ճանապարհները լեցուած են մէկ քանի մեղր խորութեամբ ձիւնով, ու մակերեսը հազիւ փոքր ինչ կարծրացած, թաղուելու վտանդէն զերծ մնալու եւ արագ ճամբորդել կարենալու համար իրենց սաքերուն տակ կը կապեն, մօտաւորապէս 50 — 60 սանթիմետր տրամագծով ձուածեւ փայտէ շրջանակներ, մէջը լարերով հիւսուած թեթեւութեան համար: Այս գործիքին շրջնորհիւ մարմնի ծանրութիւնը աւելի խո-



չոր մակերեսի մը վրայ կը տարածուի ու ձիւնի կարծր խաւը աւելի դիմացկուն կը դառնայ ու շատ քիչ կը խորանայ :

Հետեւաբար այն ամէն մարմինները որ ճնշման տակ տեղի կուտան, ինչպէս հեղուկները, իրենց ոյժը համեմատական չափով կը յայանարեբեն մակերեսներու վրայ եւ կամ անկէ կը ճնշուին համեմատաբար իրենց մակերեսի մեծութեան :

Տախտակի բարակ կտոր մը ձեռքերնիս, ծովուն մէջ դտնուած միջոցին, որքան ատեն որ տախտակին վրայ կը ճընշենք ջուրին մակերեսին ուղղահայեաց դիրքով, միւրճուելէ հետո ենք, իսկ երբ ան կը ստանայ շեղութիւն մը, սահելով կը սուբայ ջուրին խորերը, ու հոն կը մընայ այնքան ժամանակ որ մեր ծանրութենէն ազատուած չէ :

Ամենօրեայ փորձառութիւնը ցոյց կուտայ նաեւ որ եթէ, հանդարտ օդի մէջ, ուղղահայեաց դիրքով շարժինք մեր տախտակի կտորը, իր վրայ ճնշումը, ուրեմն յառաջացման դէմ ընդդիմութիւնը կը մեծնայ շարժման արագութեան համաձայն, անոր քառակուսիին չափով : Այսինքն, եթէ տախտակը կը շարժի երկվայրկեանը մէկ մեզր արագութեամբ, ու անոր վրայ չափուած ուժի մեծութիւնն է երկու քիլոկրամ . երկվայրկեանը երկու մեզր արագութեան պահուն, օդի ոյժը պիտի ըլլայ 8 քիլոկրամ . եթէ արագութիւնը ըլլայ երեք, օդի ոյժը պիտի ըլլայ 18 քիլոկրամ, որով համառօտելով կ'ունենանք՝

Արագութիւն 1 մեդր՝ ոյժ 2 ֆիլոկրամ, 2 մեդր՝ 8 ֆիլոկրամ, 3 մեդր՝ 18 ֆիլոկրամ, 4 մեդր՝ 32 ֆիլոկրամ, ևն. :

Ուրեմն օդի ընդդիմութիւնը արագութեան քառակուսիին հետ ուղիղ կը համեմատի :

Նմանապէս սուօրեայ փորձով դուտենք թէ աւելի դիւրին է վազել օդի մէջէն քան ջուրի մէջէն, ուստի

հեղուկներու մէջ եղած բոլոր շարժումներուն վրայ տեսակարար ծանրութիւնը ունի իր ազդեցութիւնը :

Գիտուած է նոյնպէս որ նաւերը առհասարակ առաջակողմը աւելի նեղ եւ սուբ մասով կը վերջանան ու հետզհետէ կը լայնան ի վերջոյ դարձեալ նեղնալու համար . ըսել է, շարժող առարկային ձեն ու դիրքն ալ (այսինքն շեղութիւնը), այդ ուժին մեծութեան տեսակէտով, իր ազդեցութիւնն ունի, ու ասկէ է թուշող դործիքներու, արագաշարժ կտորերու օդուժանակութեան (աէրօսթիւսամիֆ) ձեւերը :

Այս բոլորէն յետոյ սէտք է յիշել օդի մէկ ուրիշ յատկութեան, անոր կաշուութեան (վիսօզիթէ) բրած ազդեցութիւնը : Քանի որ օդը կատարեալ զերհեղուկ մը չէ :

Այսպիսով ի վերջոյ կ'ունենանք օդի ընդդիմադիր ոյժի թուական մեծութիւնը ցոյց տուող ձեւ մը որ է՝

$$Ոյժ = 6իշ \times մակերես \times արագութեան քառակուսին \quad Ո = Ն \times Մ \cdot Ա^2$$

Նիշը, օդի Փիզիքական վերելը յիշուած յատկութիւնները բնորոշող, այսինքն՝ ծանրութիւն, կաշունութիւն, ձեւ, դիրք, տարածութիւն, այն քանակութիւնն է որ փորձերով կը ստացուի :

Ձրանսայի մէջ, էյֆէլ, համանուն աշտարակը կառուցանող հռչակաւոր ճարտարագէտ գիտունը, այս քանակութիւնը ճշգելու համար դանազան մակերեսներու եւ մարմիններու վրայ բրած է հեղինակաւոր ուսումնասիրութիւններ, որոնց արժէքները հետզհետէ աւելի կատարելապարծուած միջոցներով ու նորանոր փորձերով կը բարեփոխուին :

Այս բոլոր փորձարկութեանց արդիւնքներէն կը հետեւին այն օրէնքները որոնց ենթակայ է օդի մէջ շարժող մարմիններու վրայ եղած ընդդիմադիր ոյժը :

Այդ օրէնքներն են՝



1) Ոյժը համեմատական է մակերեսի մեծութեան :

2) Համեմատական է օդի եւ մարմնի միջեւ եղած յարաբերական արագութեան քառակուսիին :

3) Համեմատական է , օդի տեսակարար ծանրութեան , անոր կաշունութեան ,

ձեւին , դիրքին ու տարածութեան :

Յաջորդով պիտի բացատրենք վերոյիշեալ օրէնքներուն կիրառութիւնը ու թորչքի կարելիութիւնը :

ՎԱԶԳԻՆ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ  
( Ճարտարագէտ )

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

( Շար . նախորդ բիւէն եւ վերջ )

Միջանկեալ կերպով բռնք թէ՛ աշխարհի շինոյ մասերուն մէջ ցրուած հաշմանորականները եթէ հաւաքելով պահանջներ իւրաքանչիւրէն իր ապրած միջավայրին աշխարհագրութեան համառօտ մէկ մէկ պատկերը , կ'ունենանք հսկայ հատորներ : Իրողութիւն մը , որ կ'ապացուցանէ թէ՛ առեւտրական , քաղաքական եւ կրթական նպատակներով աշխարհի վրայ ցրուած հայութիւնը պիտի կրնար աշխարհի աշխարհագրութիւնը պատրաստել :

Հաս պիտի չմոռնանք յիշելու թէ՛ վերջին ժամանակներս բեւեռային արշաւանք կատարողներուն թիւը շատցած է : Շատ պարզ է որ ոմանք վառքի համար ինքզինքնին կ'ենթարկեն այդ արկածախնդրութեան , ոմանք յանուն գիտութեան , ոմանք պարզ հետաքրքրութեան եւ թերեւս ոմանք ալ նիւթական նպատակներով : Այդ արշաւանքներուն արդիւնքը ինչ կ'ուզէ թող ըլլայ , արդիւնքը պիտի ըլլայ աշխարհագրութեան ընդլայնումը եւ ժողովուրդին կողմէ ցոյց տրուած հետաքրքրութեան հետեւանքով՝ անոր ժողովրդականացումը :

Ամփոփելով մեր սոյն հակիրճ գրութիւնը , կ'եզրակացնենք թէ՛ անյիշատակ ժամանակներէ մինչեւ մեր օրերը՝ մարդ-

կութիւնը մասնաւորապէս առեւտրական — տնտեսական եւ քաղաքական նպատակներով իր կատարած ուղեւորութիւններու ընթացքին իր հաւաքած աշխարհագրական բոլոր ծանօթութիւնները քով քովի բերած եւ « կաթիլ կաթիլ ծովեր կը կազմուին » յոյժ գեղեցիկ սկզբունքին համաձայն պատրաստած է այսօրուան լիակատար աշխարհագրութիւնը , որուն մէջ կարեւոր դեր ունեցած են Պաղոմէոս , Ամասիա ծնած յոյն աշխարհագիր՝ Ստրաբոն եւ ուրիշ շատ մը Յոյներ , Արաբներ , Պարսիկներ , Հնդիկներ եւ Հայերէն Մովսէս Խորենացի եւ Արաբիա ծընած հայագիւր էլ — Պաթէնի , որուն մասին յիշատակութիւն ըրինք ասկէ առաջ :

Աշխարհագրութեան գիտութեան ըստեղծումին պատճառները տայէ վերջ գիտնալ կ'ուզենք թէ՛ ի՞նչ օգուտ ունի այս գիտութիւնը , որովհետեւ ներկայ դարու պայմանները կը ստիպեն մեզ որ ճանչնանք հասնելիէն առաջ օգտակարը՝ իրրեւ անյետաձգելի եւ կենսական պահանջ մարդկութեան գոյութեան յաւերժացումը ապահովող եւ որդեգրենք դայն , քանի որ մեր կեանքը կապուած է օդտակարին : Արդ , ի՞նչ օգուտ ունի աշխարհագրութիւնը :

Ամէն բանէ առաջ աշխարհագրու-



թեան նպատակը եղած է նիւթական, չա՛հ: Ինչպէս տեսանք մեր նախորդ յօդուածներով, չին ատենէ ի վեր մարդիկ կ'երթային բոլորովին նոր ու անծանօթ երկիրներ, ուր սպրանք կը սանկին կամ այն տեղերէն սպրանք կը բերէին՝ ճիշդ ինչպէս ներկայ մարդկութիւնը կ'ընէ: Ուրեմն, նոր երկիրներ երթալու զազափարը ծնած է զրեթէ միմիայն նիւթական հաշիւներէ եւ անկէ ծագած է նոր երկիրներու մասին անուամբ կամ արուամբ աշխարհազրական ամէն տեսակ ծանօթութիւններ, որոնք կերտած են աշխարհագրութիւնը, ասանց որուն ոչ մէկ վաճառական կամ ստեւարական պիտի գիտնար թէ՛ իր ստեւարին առարկան եզոյ սպրանքը աշխարհի ո՞ր մասը կ'արտադրէ կամ ո՞ւր կարելի է սպասել: Ո՞ր երկիրը հաղորդակցութեան ի՞նչ միջոցներ ունի, ծովային վաճառականութիւնը ո՞ր երկրին մէջ զարգացած է եւ բնական ի՞նչ հետեւանքներով, ի՞նչ են երկրի մը բնական եւ քաղաքական պայմանները, որոնք այդ երկրին մէջ զարգացուցած են այս կամ այն ճարտարարուեստը: ո՞ր երկրին մէջ բնական ի՞նչ հարստութիւններ կան շահագործելի եւ ի՞նչ միջոցաւ կարելի է զանոնք շահագործել, ո՞ր երկրի կլիման եւ ջուրը կը ներկայացնեն նպատաւոր կամ աննպատաւ փրճակ՝ հոն զաղթելու եւ հաստատուելու եւ կամ այս կամ այն բերքը կամ արտադրութիւնը ուրիշ ո՞ր երկրի

չուկային մէջ կարելի է սպասել եւ կամ ուրիշ լեզուով խօսելով՝ այսինչ երկիրը ի՞նչ նախանիւթի պէտք ունի եւ այդ նախանիւթը ո՞ր երկրէն կարելի է հայթայթել սնոր, հարաւն հիւսիս կամ ասք երկրէ մը ցուրա եւ փոխադարձաբար երկիր զաղթուներ կլիմայական ի՞նչ անկարգութիւններու կ'ենթարկուին եւ թէ ի՞նչ կանխապուշտութիւններու պէտք է գիմեն զաղթելէ առաջ: Հարցումներ, որոնք վերջ շունին եւ որոնց պատասխանը կուտայ աշխարհագրութիւնը, որուն մէջ նշանակուած են երկրի մը դիրքը, սահմանը, տարածութիւնը, բնակչութիւնը, հողին ու կլիմային փրճակները, արտադրութիւնները, հանքային հարստութիւնները, ճարտարարուեստներու յառաջդիմութիւնը, արտածութիւնն ու ներածութիւնը, արտասահմանի մէջ ունեցած իր ստեւարական շուկաները եւ վերջապէս բնիկներուն նկարագիրը եւ բարքերը:

Ուրեմն, աշխարհագրութիւնը մեր ասօրեայ կեանքին մէջ մեր գոյութեան հետ կապ ունեցող գիտութիւն մըն է: Անոր պէտք ունին նպարտավաճառէն կամ երկաթագործէն սկսեալ ամենամեծ ստեւարականները, գործարանատէրները եւ նոյն իսկ գիտուններն ու բոլոր մտաւորականները:

ՅՈՎ. Հ. Գ. ՊԱՊԷՍԵԱՆ

Փարիզ





# Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

( Շարունակութիւնք թիւ Գ., էջ 36 )

Ընտանեկան սոցիւն բնաւ չի քանդուել ու ջնջուել անհատականութեան արժէքը : Ընդհակառակը, անիկա ցոյց կուտայ անհատին թէ ինք մաս կը կազմէ ամբողջութեան մը որ անկարելի կը դարձնէ այլ եւս ազդել աշխարհի ինչպէս որ սխալ փոփոխութիւն ազդել ընդհանրութիւն տարրեր անոնցմէ որ զինքը կը շրջապատեն :

Մեր բնական վայրագութիւնը անուաճ եղած սխալ ըլլար եթէ երբեք մենք կապուած չըլլայինք արեւակցութեամբ :

Ուրեմն, ընտանեկան սոցիւն կը հանդիսանայ այսպէս հանդուրան մը յայտնի գաղափարական արտադրութեամբ օժտուած ազազայ մարդկութեան մը համար, այնքան հեռու մեր ներկայ գոյութիւններէն :

Ընտանեկան սոցիւն այսպէս ի յայտ կուգայ որպէս սոցի մը յարակցութեան որ կը ձգտի անդադար ընդարձակելի : Ան կ'երթայ անմիջական ժամանակակիցներէն դէպի նախորդներուն, որոնցմէ մեզի կուգան վարքեր, գաղափարներ, ժառանգութիւններ եւ անթիւ աւանդութիւններ : Ան կ'ընդլայնուի մինչեւ նոր սերունդներուն, որոնց շահերը պէտք է նրկատուութեան աւանդին :

Ընկերական եւ սոցիալին կեանքին մէջ չունինք ընտանիքէն աւելի հաստատուն յենարան մը դնելու համար մեր բոլոր յայտերը եւ ստանալու հաւատքին երաշխիքը, կեանքի գոյութեան ընդհանրութիւններու զէմ պատրաստութեան մէջ : Հո'ն է որ կը գաղբին անգամ մը ընկերական բոլոր ծանրակշիռ խնդիրները, եւ շեն ունենար լուծում ուրիշ ոչ մէկ տեղ որքան ստեն որ շտաման իրենց լուծումը այդ սեամէններու : Ընտանեկան կեանքին լքումը լքումն է պատուոյ գաշտի, ուր ահեղ

պայքարով է որ կը շահուի ապագան : Տկարացումը ընտանեկան կապին կործանումն է ամբողջ ընկերական կապին :

Մեր հանրային թշուառութիւններուն մեծ մասը արդիւնքն են ընտանեկան պարտականութիւններուն հանդէպ մեր ցոյց տուած անփութութեան :

Այդպիսի ու նաեւ մարդկային մեծ ընկերութիւններուն փոխադրուելիք այս ընդարձակումը ընտանեկան զգացումները պէտք է որ նախ զգացուած ըլլան ընտանեկան յարկին տակ :

Ընտանիքը կը ներկայանայ մեզի որպէս նպաստուոր կերպով կարգադրուած զգրոց մը ուր ամէն բան կը սովորուի զրեթէ ինքնարեւարար : Կրթարան մը անթիւ շնորհներու, առաքինութիւններու եւ ազնիւ ներշնչումներու :

Ձեմ գիտեր չիտակը թէ հոն աւելի խմայականութեամբ է որ կը սովորուի թէ զոց ընելով, բայց ամէն պարագային այս երկու միջոցները նոյնպէս գործադրելի են : Որովհետեւ ընտանիքին անդամները կապուած ու միասորուած են անոր հետ նախ ժառանգականութեամբ, յետոյ՝ ըզգացումներով, իսկ ամենէն վերջը՝ խորհրդածութեամբ, զուգընթաց ժամանակի որոշ շրջաններուն հետ :

Կ'անցնիմ ահա յուզեալ սրտով մը սեամբ մարդկային բնակարանին, որուն միակ անունը նոյն իսկ կ'ամփոփէ մեզմէ իւրաքանչիւրին համար շարք մը անթիւ տղաւորութիւններու ու քաղցր յիշատակներու :

Ընտանեկան յարկը նախ եւ առաջ պատասպարան մըն է : Բնութեան բոլոր անբարեխառնութիւններն ու անպատահութիւնները մղած են կակը գայն ստեղծելու եւ աւելի հաստատելու :



Էականեր այնքան լաւ կը դզան ընտանեկան այս խաղաղ միջավայրին մէջ որ իրենց ստացած յոյսին եւ երջանկութեան հաւաստիքը կը գերազանցէ միւս բոլոր գոհունակութիւնները: Հո՛ն, ոչ թէ միայն մանուկը խնամուած ու պաշտպանուած է այլ՝ նոյն իսկ մեծերը: Որովհետեւ ձեռք մը, աւելի գերազանց քան մարդկային որ եւ է հովանաւորութիւն, կը հսկէ ընտանեկան յարկը: Հո՛ն է որ մարդկայինը կը միանայ գերմարդկայինին աննշմար կերպով:

Եթէ կայ որ եւ է սրբավայր մը որ չէ շինուած մարդկային ձեռքով, ան ալ ընտանիքն է, ուր կը տիրեն քաղցրութիւն եւ հայրական աստուածային սէր: Հայրը զայն կ'աւետէ իր դաւիին, իսկ զաւակը՝ իր հօրը: Վերջին հասնողներով վերըստացուած գիմազիծերը նախնիքներուն մեղի կուտան նախազգացումները խորհրդաւոր վերջամնացութեան:

Մանուկը կը պատկանի նախ իր ծնողքին: Ծնողքն է որ ամենամեծ պարտականութիւնը ունի անոր բարոյական ու իմացական կազմութեան:

Այո՛, մանուկը կը պատկանի նախ անոնց որ յանձն տան կեանք տալու իրեն: Այս պատճառով ընտանիքը կը կազմէ հիմք ընտրագոյն մասին կազմութեան:

Արգարեւ, ընտանիքը ունենալով իր հետ ամբողջ անցեալը, կը շարունակէ զեռ աւանդութիւնները: Ան կը ստեղծէ բարոյական կեանքը: Գործով որ կը տիրէ ընտանիքին մէջ, անգործութիւնը որ մէկն է երջանկութեան յայտնութիւններէն, առաքինութիւնները որ ի յայտ կուգան հոն, անմիջական ազդեցութիւնն ունին մանուկին վրայ:

Միջավայրի մը մէջ ուր կը տիրեն անմիտքանութիւն, անհամաձայնութիւն եւ անբարոյականութիւն, բացասիկ ձեւով է որ անշուշտ ծնունդ կը ստանայ ընտրագոյն մասը: Որովհետեւ կարելի չէ

ունենալ ընտրագոյն մասը առանց բարոյական խոր արժէքի:

Կը կրկնեմ անգամ մը եւս, առանց բարոյական արժէքի ոչ մէկ բարձրացում կարելի է:

Որով, յստակ կերպով կը տեսնուի թէ սրբան նկատելի է ընտանիքին գերը մանկական շրջանին:

Այս շրջանի վերջաւորութեան, ծրնողքներ մեծ ուշադրութիւն պիտի դարձնեն իրենց խօսակցութեան ընթացքին: Որովհետեւ ինչ որ խօսուի շուտով միտք կը պահուի անոնց կողմէ:

Պէտք է նաեւ հսկողութեան ենթարկուի անոնց ընթերցանութիւնը: Հետացնել այն բոլոր գիրքերն ու թերթերը սրտնց գործածութիւնը չի կրնար նպատաւոր թուիլ անոնց իմացական թարմ կարողութեան:

Պարզապէս, պէտք է զգուշանալ այն ամէն խօսքերէն ու շարժումներէն որոնք կրնան զիւրութեամբ գործակցել զէշ կազմութեան մը:

Ծնողքներ նոյնպէս պէտք է գիտնան յարգել իրենց զաւակները, կարեւոր պայման, որպէս զի անոնք եւս իրենց կարգին զիրենք շրջապատեն կատարեալ գործովով:

Խրատը ու հսկողութիւնը մեծ գեր կը կատարեն պատանեկութեան սկզբնաւորութեան: Սրտակից ու բարեկամ ըլլալ անոնց ցաւերուն, մասնակցել անոնց բռնական զգացումներուն, գիտել անոնց դուարթ խաղերը, մտիկ ընել անոնց ընթերցանութիւնը, լսել անոնց պատուութիւնները, ուրախանալ երբ կը հրճուին, ցաւիլ երբ վիշտ մը ունին, եւ մանաւանդ երբ օգնութիւն մը ստանալու համար իրենց քով կը վազեն, անոնք պէտք է որ ստանան գոհացում թէ ծնողական գործովի եւ թէ բարեկամական անկեղծութեան:

Ներկայիս, որքա՛ն մեծ թիւով ծրնողքներ զէշ դաստիարակներ են, արհա-



մարհելով այն մեծ գերը որ իրենց է վիճակուած : Որքա՛ն անոնք կը հեռացնեն վայելչութեամբ մը իրենց վրայ փտասուած ծանր ու նուրբ պատասխանատուութիւնները : Զաւակը մեծցնել չի նշանակեր հսկել միմիայն մարմնական աճումին այլ՝ պէտք է նաև ապահովել անոր բարոյական ու իմացական զարգացման

նախնական կազմութիւնը, առանց որու հակը պիտի դատապարտուէր մնալու իր անտանական վիճակին մէջ, եւ պիտի դատնար իր ազգին համար կատարեալ պատուհաս մը իր հասունութեան շրջանին ու բնօ մը իր կեանքի իրիկնամուտին :

ՎԱՀԱՆ ՔԷՐԷՍԹԷՃԵԱՆ

( Շարունակելի )

## Հ. Մ. Ը. Մ.

Հ. Մ. Ը. Մ. ի հիմնարկութեան խանդավառ օրերուն էր : Պոլսոյ արուարձաններուն մէջ մասնաճիւղեր կը կազմուէին ամէն օր : Բարի նախանձ մը կը մղէր մասնաճիւղերը իրենց սեփական մարդարանները ունենալ . ոմանք եկեղեցւոյ բակը, ուրիշներ գոլթոցին պարտէզը, ոմանք թափուր հօգեր, իսկ շատեր ալ գերեզմաննոցը մարդազաշտի վերածած էին :

Հ. Մ. Ը. Մ. ի մօտակայ արուարձաններէն միոյն մասնաճիւղն ալ այդ նրպատակաւ դիմում բրած էր, հայու մը պատկանող եւ չորս կողմը տուներով շրջապատուած փոքրիկ դաշտ մը իր տրամադրութեան տակ ունենալու համար :

Հաւանութիւն տրուած օրն իսկ ամի մը պատանիներ բահ ու բրիչ ի ձեռին գործի սկսած էին եւ շարաթ մը վերջ արդէն չորս կողմը տախտակամածով շրջապատուած մարդազաշտ մը ունէին իրենց տրամադրութեան տակ :

Դաշտին կից տուներէն միոյն պատին վրայ երեք մէթր բարձրութեամբ գրերով կանգուն կը տեսնուէր Հ. Մ. Ը. Մ. զորս կոյրերն անգամ կարող էին 200 մէթր հեռուէն կարգալ : Այդ գրերը մասնաճիւղին պարծանքն էին :

Անցան տարիներ : Հ. Մ. Ը. Մ. ը դէպքերու բերմամբ Պոլսէն հեռացաւ .

մարդազաշտերը զրաւուցան թուրք երիտասարդութեան կողմէ եւ սակայն նուիրական չորս գրերը կանգուն կը կենային զրաւուած մարդազաշտին պատին վրայ : Սա պարզ պատճառաւ որ գրերը գրուած էին գետնէն հինգ մէթր վեր պատին վրայ եւ միայն վսեմ խէալի մեծ հուրով վառուած խենդ պատանիներ կրցած էին իրենց կեանքը վտանգելով գրել այդ հրակայ վերտառութիւնը : Վերտառութիւն որ կանգուն կը կենար դայն գրող խենդերուն Պոլսէն հեռանալէն վերջն իսկ, իբր մնալուն կոթող անոնց ձեռնարկած վսեմ գործին :

Տեղական կառավարութիւն ամէն կողմէ եղած բողոքներուն վրայ քանիցս ձեռնարկած էր մաքրել ու աւրել այդ հսկայական գիրերը, սակայն ի դուր :

Միթէ կարելի եղա՞ծ էր ջնջել Հ. Մ. Ը. Մ. ի սուրբ գաղափարը թափառական երիտասարդութեան սրտէն :

Յուսահատած ստիպուեր են ամբողջ պատը ներկել, այդ հայ երիտասարդութեան փայլուն անցեալը խորհրդանշող 4 հսկայ գրերը անյայտացնելու համար :

Ու գործին յատկանշական կէտը հոս է ահա : Անձրեւները տարիներու քնթացքին լուալով յետոյ քսուած ներկը, հսկայական չորս գրերը կամաց կամաց սկսած են երեւան դալ, ու այսօր բացակայ պա-



տանիններու մարդազաշտին պատին վրայ նորէն կ'երեւան Հ. Մ. Ը. Մ. գրերը :

Մեկնարանութիւնները աւելորդ են :

Ոչ ոք թող խորհի որ Հ. Մ. Ը. Մ. օր մը կ'անյայտանայ՝ յաւիտենապէս :

Ան թաղուած կը մնայ հայ պատանիններուն սրտերուն խորը, օր մը աւելի փայլուն, երեւան դալու համար, մարդարանի շորս գրերուն պէս :

( Փարիզ ) ԾԵՐ ԱՔԼՈՐ

ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ

1. — ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԽԱՂ

Սկաուտները մէկ շարքի վրայ կը նստին : Անոնցմէ մին երկու քայլ հեռու, մէջտեղը կը նստի : Մէկ շարքի վրայ նստող սկաուտները կ'ունենան մէկ — մէկ քաղաքի անուն (Մարսիլիա, Լիոն, Փարիզ, եւ այլն) : Երկու քայլ հեռու նստող սկաուտը կը պոսայ ո եւ է քաղաքի մը անունը եւ կը վազէ դէպի 50 քայլ հեռու դանուող շրջանակ մը (հեռաւորութիւնը կրնայ ըլլալ 50է պակաս կամ աւելի քայլ, սկաուտներուն փափաքին համաձայն) եւ կ'սխալէ վերջ այլ շրջանակին վրայ, կը վազէ ետ : Նոյնը կ'ընէ նաեւ այն սկաուտը, որուն քաղաքին անունը տրուեցաւ :

Երկուքէն ով որ ամէնէն առաջ նստի պարտոյ ձգուած տեղը (շարքէն ելած ըսկաուտին տեղը), ան կը շահի եւ կը մնայ հան, ու միւսը կը նստի երկու (2) քայլ հեռու, շարքին զիմաց ու կը պոսայ դարձեալ ո եւ է քաղաքի մը անունը ու կը վազէ դէպի շրջանակը, քաղաքին անունը տրուած սկաուտն ալ ետեւէն : Եւ այսպէս շարունակաբար :

2. — ԳԱԻԱԶԱՆԻ ԽԱՂ

Սկաուտները երկու հաւասար խումբերու կը բաժնուին եւ իրարմէ 6-ական քայլ հեռու մէկական շարքի վրայ կը կենան (խումբերու ճակատ) :

Երկու խումբերու Ա. սկաուտները կ'ունենան ձեռքերնին մէկ — մէկ սկաուտական դաւազան :

Տրուած ազգանշանին վրայ՝ Ա. սկաուտները ձեռքերնուն դաւազանը կ'անցնեն մէջտեղէն (բոլոր սկաուտները ոտ-

քերնին բացած կ'ըլլան) եւ կուտան Բ. սկաուտներուն : Այս վերջինները գաւազանները կ'անցնեն գլուխնուն վրայէն եւ կուտան Գ. սկաուտներուն, որոնք գաւազանները կ'անցընեն ստքերնուն մէջտեղէն եւ կուտան Դ. սկաուտներուն եւ այսպէս շարունակաբար : Վերջին սկաուտը վազելով Ա. սկաուտին առջեւը կուգայ եւ դարձեալ կը շարունակեն դաւազանը անգամ մը ոտքի մէջէն եւ անգամ մըն ագլուխի վրայէն անցընել, մինչեւ որ բոլոր սկաուտներն ալ առջեւ գան : Եւ այն ետմբր որ շուտ լրացնէ, կը շահի խաղը :

3. — ԻՐԱՍՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԽԱՂ

Մնաստի մը եւ կամ ծառատանի մը մէջ, սկաուտներու վարիչը կը պահէ հասար մեծութեամբ թուղթեր, որոնց վրայ մէկ — մէկ գիրը գրուած կ'ըլլան եւ այդ գիրերու միացումով կը կազմուի ըսկաուտական ո եւ է մասնագիտութիւն մը (օրինակ՝ խոհարար, հետախոյզ, կարմիր խաչ, եւ այլն) : Թուղթերը կը պահուին այնպիսի տեղեր՝ ուր գիւրութեամբ ըսկաուտները չի կարենան գտնել :

Տրուած հրամանին վրայ, սկաուտները կը սկսին փնտռուի : Որ սկաուտը որ ամէնէն առաջ գտնէ գիրերը եւ կազմէ մասնագիտութեան անունը՝ կը շահի խաղի առաջնութիւնը :

Արշաւներու ընթացքին ալ կարելի է կատարել այս խաղը, որպէս մրցում խումբակներու միջեւ :

Հայացուց՝

ԳՐ. Խ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(Սկտ. փոխ — խմբապետ)

Պուրկազ



## Ս Ե Փ Ա Կ Ա Ն    Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Թաքար - Բագարեր

Ստացանք Միութեանս պաշտօնա -  
թերթը. կարդացինք ու յուզուեցանք: Մէկ  
բան կը մնար մեզ լսել չ. Մ. Ը. Մ. -ի խօս-  
քը որ հայ ցեղին ձայնն է: Եւ ահա կու-

պատրաստած է իր ասպարայ գործունէու-  
թեան նախադիժը, քաջ առ քաջ պանոնք  
գործնականացնելու միջոցներ ձեռք առած  
է: Սկսուածները բոլորն ալ ունին իրենց  
համազգեստը:

Գարնան արշաւանքները վերսկսած  
են:



ԹԱԹԱՐ - ԲԱԶԱՐ ՃԸՔ Է. Մ. Ը. Մ. -ի Սկսուած - Գայլուկները

զամ ձեզ տեղեկացնել թէ հաճութեամբ  
և ստանց վերապահութեան ամէն սք լըծ-  
ուած է շ. Մ. Ը. Մ. -եան աշխատանքին:  
Ոչ մէկ քէն ու ըսի - ըսաւ. միաձույլ կամք  
մը ստեղծուած է, որուն հեռեւանքով  
չարթուս ընթացքին սկսուածներու թիւը  
նշանակելի յաւելում մը կրեց:

Շրջանային Պատգամաւորական Ժո-  
ղովի գումարումէն յետոյ, Մ. ճիւղս ալ  
ունեցաւ իր Ընդհ. Ժողովը:

Նորակազմ Վարչութիւն մը ունինք,  
որուն կը մասնակցին աշխատանակ, կս-  
րովի շ. Մ. Ը. Մ. -ականներ, որոնք են՝

Եղբարք՝ Կարապետ Թաղւորեան, Մի-  
նաս Մինասեան, Օննիկ Միքայէլեան,  
Թաղւոր Թաղւորեան, Վարդան Գումբու-  
եան:

Նորընտիր Վարչութիւնը արդէն իսկ

Գանի մը խօսք « Հայ Սկսուած » ի մա-  
սին: Բովանդակութիւնը զուտ արդայնա-  
կան, ոչ մէկ թեքում աջ կամ ձախ. պարզ  
ու յստակ, Ժողովրդական լեզու. սկսուած  
կամ մարդիկ ըլլալէ առաջ հայ: Գուք կա-  
տարեցիք ձեր պարտքը. կարգը մերն է  
հիմա՝ շարքայիններուս:

Պէտք է ասորի մեր շ. Մ. Ը. Մ. -ական  
ապրումներուն ու խնայուններուն արտա-  
յայտիչ՝ « Հայ Սկսուած » ը: Ուրեմն շ.  
Մ. Ը. Մ. -ական, « Հայ Սկսուած » կար-  
դայ ու կարդացուր: Բաժանորդագրուէ  
նախ ինքզ, ու բաժանորդադրէ:

Իսկ զուք գեկալար ընկերներ կը զը-  
նահատենք ձեր գործունէութիւնը: Կըր-  
նաք վստահիլ մեր հայ սկսուածական  
խոստումին:

Մ. ՄԻՆԱՍԵԱՆ



Հ. Մ. Ը. Մ. Ը ՊՈՒՐԿԱԶԻ ՄԷՁ

— 00 —

Հ. Մ. Ը. Մ. Ը տեղւոյս մէջ ունի կենսունակ Մ. Ճիւղ մը, հիմնուած 1924-ին, որ կը կազմէ Պուլկարիոյ շրջանի 7-րդ Մ. Ճիւղը: Տեղւոյս Մ. Ճիւղի անդամներու թիւը այժմ կը հասնի 140-ի, սկաուտական, Փութպոլի եւ աթլէթի բաժանումներով:

— Սկաուտական բաժինը կը բաղկանայ 19 սկաուտներէ, 33 գայլիկներէ, 16 արեւնուշներէ եւ 18 պարիկներէ, որոնք բոլորն ալ ունին իրենց համապատասխան համազգեստները: Վերջերս կազմուեցաւ նաեւ երէց սկաուտներու բաժինը, որ առ այժմ իր մէջ կը համրէ 10 հոգի:

Սկաուտական բաժնի բոլոր խումբերը կ'ունենան հաւաքումներ, սկաուտական դասախօսութիւններ, արշաւներ, եւ այլն:

Օտար վարժարաններ յաճախող սկաուտներուն եւ աշխատաւորներուն համար սկաուտական խորհուրդի կողմէ հաստատուած է հայերէնի դասընթացք մը, որ մեծ կանոնաւորութեամբ կը շարունակուի: Կը դասաւանդուին՝ հայերէն, շարադրութիւն եւ հայոց պատմութիւն, եւ այսպէսով՝ հայացի կրթութեամբ կ'օժտուին օտարութեան մէջ ապրող հայորդիները, որոնք միջոց չունին հայկ. վարժարան երթալու: Ուրեմն, Հ. Մ. Ը. Մ. ի մէջ, հայ պատանին ոչ միայն Ֆիզիքական, այլ նաեւ մտային դարգացում կը ստանայ:

Պուլկարահայ սկաու. վերջին բանակումին, որ տեղի ունեցաւ Պուլկազի շրջանին մէջ, մեր Մ. Ճիւղը մասնակցեցաւ աւելի քան 50 անդամներով, որոնցմէ 4 խմբակ որպէս մրցող սկաուտներ եւ արեւնուշներ:

Մեր սկաուտական բաժինը, իր ըստուար շարքերով միշտ ալ իր մասնակցութիւնը կը բերէ ազգ. թէ պուլկարական

բոլոր մեծ տօներուն, յաճախ զնահատանքի առարկայ դառնալով:

— Մարզական բաժինը ունի Փութպոլի ճիւղը մաս կը կազմէ պուլկ. մարզական Ֆետերասիոնին եւ կը մասնակցին անոր կողմէ կազմակերպուած պաշտօնական մրցումներուն:

Հ. Մ. Ը. Մ. Ը պուլկարահայ Փութպոլի առաջնութեան մրցումներուն կը մասնակցի եւ վերջին մրցումներուն մէջ առաջնութիւնն է շահած եւ եղած է 1931 - 1932 տարուայ Փութպոլի ախոյեան: (Անցնող տարեշրջանին մրցաշարք տեղի չունեցաւ):

Աթլէթիք բաժինը ունի իր մէջ կարող երիտասարդ ուժեր, որոնք բաւական լաւ շափանիչներ ձեռք ձգած են (այսպէս օրինակ — բարձրութիւն՝ 1.67 մէթր, մէկ քայլ 6.06 մ., երեք քայլ՝ 12.86, եւ այլն):

Անցնող տարեշրջանի ընթացքին պուլկարներու կողմէ կազմակերպուած Պուլկազի նահանգային աթլէթիք մրցումներուն մէջ, Հ. Մ. Ը. Մ. ի մարդիկները կարեւոր յաջողութիւններ ձեռք ձրեցին եւ Հ. Մ. Ը. Մ. Ը, կէտերու մեծ տարբերութեամբ մը, բոլոր խումբերուն մէջ հանդիսացաւ առաջին:

ԳՐ. Խ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(Սկաու. փոխ - խմբապետ)

Պուլկազ



ՍՈՒՐԻԱ - ԼԻԲԱՆԱՆ

— 00 —

Զահլէ

Հ. Մ. Ը. Մ. ի Զահլէի Մ. Ճիւղս ունի 30 անդամներ. վարչականօրէն կապուած ենք Սուրիա - Լիբանանի Շրջ. Վարչութեան:

Ըստ բաւականի դօրաւոր կազմակերպութիւն մըն է:

Վարչութեանս անդամներն են՝



Եղբայրք Կիրակոս Թաղաքի՝ առե-  
նապետ, Ս. Կարապետեան՝ առեկազար,  
Կ. Մանուկեան՝ դանձապահ, Յ. Տէր -  
Մելքոնեան՝ Փութաղոյի խմբապետ, Լ.  
Սարգիսեան՝ գոյքապահ:

Փութաղոյը տարւոյս ընթացքին ունե-  
ցած է մեծ գործունէութիւն մը. դայցած է

մա, և ալլն: Փոքրամասնութիւն մը կայ  
սակայն որ ի ծնէ մեզ հայերու հետ ապ-  
րած ըլլալով չեն բաժնուիր մեզմէ: Ա-  
սոնց կարգէն թուենք Խալիլ Ռուհանի,  
ընիկ Զահէլցի Երիտասարդը, բառ մը  
հայերէն չէր գիտեր, հիմա ոչ թէ միայն  
կը խօսի ալլ և գինքը հայ մկրտած ենք



Զահիլի Լ. Մ. Ը. Մ. ի ֆութպոլի խումբը

Հայէպ, Պէյրութ, Ռայաք, և ալլն, Եր-  
բեմն յաղթուած, Երբեմն ալ յաղթած է:  
Կորած է 720 քիլոմէթր տարածութիւն:

Վերջերս շնորհիւ Եղբ. Կ. Ալիքսան-  
եանի կազմուած է նաև սկաուտական  
խումբ մը. բոլորին զգեստներն ալ հայ-  
թայթուած են Շրջ. Վարչութեան կողմէ:

Ունինք մեր սեփական Ակումբն ու  
մարդական գործիքները: Մօտերս կ'ունե-  
նանք նաև խաղաղաշտ մը, վարձքով:


Յաճախ կը կազմակերպուենք աթլէթիք  
մրցումներ: Տեղացիք բնաւ չեն հետաքր-  
քուիր մարդական կեանքով: Անոնք բնոյ-  
հանրապէս կը յաճախեն սրճարան, սինէ-

— Հրայր Օհանեան — :

Մեր Բ.րդ խումբը Ռայաքի մէջ  
Փութաղոյի հանդիպում մը ունեցաւ Քրան-  
սական Ա. Ս. Պ. ի Բ. ի հետ: Սաղը վեր-  
ջացաւ մեր պարտութեամբ 2 - 3:

Սուրիոյ - Լիրանանի հեծելանիւի ա-  
խոյեան Պ. Յ. Պալքեան, մեր Մ. ճիւղի  
անդամներէն է: Չորս տարի է ի վեր ա-  
խոյեանութեան մրցանակը կը շահի: Ու-  
նի փոքր Եղբայր մը Օննիկ՝ 17 տարեկան.  
մեծ կարողութիւն ցոյց կուտայ: Մինչև  
խիզ գերազանցելու իր Եղբայրը:

ՍԱՄՈՒԷԼ - ՇԱՀԱԼԻ





# Հ Ա Յ Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

— 00 —

Սորհրդային Հայաստանի թերթերէն մեր քաղաք տեղեկութեանց համաձայն մեր մարդիկ արեւնակիցները Անդրկովկասի մարզական կեանքին մէջ հակայական նուաճումներ են կատարած շահած բլլալով բաղմամբ առաջին կարգի մրցանիչներ :

Հայ մարդիկներու այս յաջողութիւնը Սորհրդային Հայաստանի կառավարութեան կողմէ գնահատուած բլլալով, վերջինս որոշած է Երեւանի մէջ հիմնել նոր մարզարան մըն ալ : Այս առթիւ հրահանգուած Երեւանի քաղաքապետութեան 11 հեկտար հողամաս մը յատկացնելու այդ նպատակին համար :

Շինարարական մարմիններուն հրահանգուած է նոյնպէս անմիջապէս հողալ մարզարանի անհրաժեշտ նիւթերը :



## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Պ Ի Օ Ն Ե Ր Ն Ե Ր Ո Ւ (Ս Կ Ա Ո Ւ Տ) Զ Ե Մ Բ Օ Ր Ի Ն

Այժմէն իսկ մեծ պատրաստութիւններ կը տեսնուին կազմակերպելու հայ պիտներնեքու ձեմբօրին, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն հայ.ի 28 շրջանները 6,000 սկաուտներով : 475,000 բուրլի վարկ է բացուած :

## Ֆ Բ Ա Ն Ս Ա

### Ֆ Ո Ւ Թ Պ Ո Ւ

— 00 —

17 մայիսին ստնազնդակի մրցում մը տեղի ունեցաւ ընդմէջ Մուրատեան վարժարանի և Լիսէ Ժանսօն տը Սայլիի աշակերտներուն, Սթատ տը Քոլոնպի դաշտին վրայ :

Յարձակման առաջին հարուածը վի-

ճակուեցաւ գաղղիական խումբին, սակայն հաղիւ թէ խաղը սկսաւ, արդէն հայերը յափշտակեցին գնդակը ու վտանգի մէջ ձգեցին Ժանսօնի բերդապահը :

Հինգ վայրկեան շէր անցած երբ հայ ձախակողմեան յառաջապահը փաս մը տուաւ իր խմբապետին, որ անմիջապէս առաջին կէտը նշանակեց : Գաղղիացիները առանց վրդովելու դարձեալ սկսան իրենց յարձակողական դիրքը պահել, սակայն իրենց ամէն մէկ մղումը ևս կը դարձուէր հայ պաշտպանով երկու խաղացողներէն՝ Անդր. Միրաքեան և Ենովք Լաչինեան որոնք օրուան ամենալաւ խաղացողները ներկայացան իրենց բերդապահով՝ Ե. Պետրոսեան որ իր յաճախակի, ճարտիկ ու գեղեցկաձեւ նետուածքներով շատ մը յարձակումներ ի գերեւ հանեց : Ա. կէտէն 15 վայրկեան յետոյ գաղղիացի աջ - պաշտպանողը հայ ձախ - բացի « փաս » ընդմիջել ուղելով Բ. կէտը նշանակեց իր խումբին հակառակ : Գաղղիացիները առանց վհատելու դարձեալ յարձակողական դիրք բռնեցին, բայց անկարելի եղաւ իրենց, հայ պաշտպանողական երբեակ խումբին յաղթել, ու քիչ յետոյ աջ մէջին « փաս » ուր խմբապետը դարձեալ կէտ մը նշանակեց մինչ կիսախաղի սուլիչը կը փչէր : Մուրատեան վարժարանը 3-ով 0 կը շահէր :

Փոքր գաղարէ մը վերջ, երկու խումբերը նոր խանդով վերստին գործուցութեան սկսան. խաղը հաւասար էր : Երկու բերդերը փոխն ի փոխ վտանգի մէջ էին : Քսան վայրկեանի խաղէ մը վերջ, խմբապետին « փաս » էն շարունակով հայ աջ - մէջը անվրէպ հարուածով մը 4-րդ կէտը նշանակեց իր խումբին :

Գաղղիացիները առանց իրենց պաղաբիւնութիւնը կորսնցնելու, շարունակե -



յին իրենց յարձակումը, բայց միշտ հայ երբարխումբին բախելով եւ կը ստիպուէին դալ: Վերջապէս խաղը վերջացաւ Մուրատեան խումբի յաղթութեամբ (4 - 0):

ԾԱՆՈԹ. — Ժամսօսն տը Սալլիի խումբը անգամ մը յաղթուած ըլլալով (6 - 1) ուզած էր փոխվրէժ (ըրվանջ) մը սարքել Ա. եւ Բ. խառն խումբով մեր Բ. ին գէմ:

ՄԱՐԶԱՍԷՐ



ՊէՅՐՈՒԹ

Անպարտելին . . .

Պէյրութ հասած ու երկու մրցումներ ունեցած է Հարօքլի հրէական խումբը: Առաջին հանդիպումը ունեցած է Պէյրութի Ինթլընասիոնալ Փութպուլի խումբին հետ:

Յաջորդ օրը ճակատած է Հ. Մ. Ը. Մ. ի Գամասկոսի Մ. ճիւղի անպարտելի խումբին դէմ, բազմահաղար հանդիսա - կաններու ներկայութեան:

Հ. Մ. Ը. Մ. ի Գամասկոսի Մ. ճիւղը կը յաղթէ 2 - 1-ով:

ԳԱՀԻՐԷ — Պասփէք - պօլ

Մայիս 4-ին, Գահիրէի Արածանի պատքէթ - պօլի Ա. խումբը բարեկամական մրցում մը ունեցած է Փրանսացի սկաուտներու հետ: Մեր աղաքը յաղթած են 25-ի դէմ 38 կէտով:

ԿԻՊՐՈՍ

Մելոնեան Կրթ. Հաստատութիւն

Ապրիլ 21-ին Մելքոնեան Կրթ. Հաստատութեան սկաուտները, Հաստատութեան Բարերարի ամարանոցին առջև տողանցք մը կատարած են, ի պատիւ Կիլիկոյ վեհափառին:

Ն. Ս. Օծութիւնը տողանցքէն յետոյ օրհնած է սկաուտները:

ԵԳԻՊՏՈՍ

Ազեֆսանդրիա — Քրօս Քաունդրի  
Ապրիլ 29-ին Ազեքսանդրիոյ մէջ տե-

ղի ունեցած է քրօս քաունդրիի մրցում մը, նախաձեռնութեամբ Հ. Մ. Ը. Մ. ի Եղիպտոսի Շըջանային Վարչութեան, մասնակցութեամբ՝

« Հ. Մ. Ը. Մ. » Ազեքսանդրիա՝ Երկու մարզիկ, « Հ. Մ. Ը. Մ. » Հելիօպոլիս՝ մէկ մարզիկ, « Կամք » Ազեքսանդրիա՝ մէկ մարզիկ, « Արարատ » Ազեքսանդրիա՝ երեք մարզիկ, « Արարատ » Գահիրէ՝ մէկ մարզիկ:

Արդիւնք:—Պր. Կ. Մոմճեան (Կամք) Ա. 31-30 վայրկեանէն: Պր. Կ. Ալիքսանեան (Արարատ՝ Ազեքսանդրիա) Բ.: Պր. Գ. Պ. Ն. Եագուպեան (Արարատ՝ Գահիրէ) Գ.:

Պր. Կ. Մոմճեան ստացած է 1934-ի բաժակը: Մրցման մասնակցողներուն բաշխուած է մետալներ:

Քրօս քաունդրի արշաւանք - վաղքի ընթացքին Ազեքսանդրիոյ Հ. Մ. Ը. Մ. Մ. ճիւղի մարդարանին մէջ պատքէթ - պօլի բարեկամական խաղ մըն ալ տեղի ունեցած է Հ. Մ. Ը. Մ. ի եւ Կամքի միջեւ ու վերջացած առաջինի յաղթութեամբ:

Կր յուսանք թէ Եղիպտոսի մարդական միութեանց — Հ. Մ. Ը. Մ. ի այս առաջին համագործակցութիւնը ճամբայ պիտի բանայ, Եղիպտոսի բոլոր ոչ Հ. Մ. Ը. Մ. միութիւններու Հ. Մ. Ը. Մ. ի հետ այնքան ցանկալի միացման գործին:



× Հաճոյքով կը տեղեկանանք թէ, Գահիրէարնակ Բժշկ. Ղազարոս Արթինեան Եղիպտական սկաուտներու Ազգ. Ընկերակցութեան Կեդրոնի անդամ, պատուակալ բժիշկ նշանակուած է:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԱԹԷՆՔ ԵՒ ԱՐՈՒԱՐՉԱՆՆԵՐ  
Հ. Մ. Ը. Մ. — Գալիթէայ Փութպուլի մրցումը վերջացած է Հ. Մ. Ը. Մ. ի



պարտութեամբ՝ 2 - 1-ով: Մեր աղոյ  
խաղարկութիւնը, կարգապահութիւնն ու  
ճկունութիւնը գնահատուած է ներկայ  
հայ եւ օտար հանդիսականներու կողմէ:  
Ներկայ եղած է Միութեանս Շրջ. Վար-  
չութեան ատենապետ՝ Պր. Ազարեան:



ՄԻՋ-ՄԱՐԶԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄԸՐ-  
ՅՈՒՄ, Կայծ, Արծիւ, Նոր - Բիւրակ ու  
Հ. Մ. Ը. Մ. ի Ֆալէրոյի (Աթէնքի շրջան,  
Մասնաճիւղի միջև, Միքրասիաթիքի  
ղաշտին վրայ: Ներկայ եղած են՝ Հ. Մ.  
Ը. Մ. Վերակազմիչ Յանձնախումբի ան-  
գամներէն՝ Պրք. Գէորգ Փափաղեան:  
Համբարձում Կիւտէնեան եւ Կարօ Շահին-  
եան:

Մրցումներու բացումը կատարած է  
Պր. Հ. Կիւտէնեան եւ բացատրած է հա-  
մադործակցութեան անհրաժեշտութիւնն  
ու առանց յաղթելու մարմաջէն տարեկու  
ղաշտին վրայ օրինական պայմաններու  
մէջ խաղալու պէտքը:

Արդիւնք՝

Կայծ — Նոր - Բիւրակ 0 - 0:

Հ. Մ. Ը. Մ. Ֆալէրօ — Արծիւ 2 - 0:

Մրցումները կը շարունակուին:



ՍԵԼԱՆԻԿ

Հ. Մ. Ը. Մ. ի 5-րդ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ

Հ. Մ. Ը. Մ. ի Սելանիկի Մասնաճիւ-  
ղի 5-րդ Ողիմպիականը տեղի պիտի ունե-  
նայ յունիս 5-ին Ե. Գ. Ընկերակց. խա-  
ղադաշտին մէջ:

Հ. Մ. Ը. Մ. ԱԿԱՆԻ ՄԸ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

Սելանիկի մէջ Ե. Գ. թէնիսի զաշ-  
տին վրայ բացումը կատարած է Սելանի-  
կի ախոյեանութեան տարեկան մրցաշար-  
քին: Սոյն մրցումներուն մասնակցած է  
Հ. Մ. Ը. Մ. ի Սելանիկի Մասնաճիւղի  
անգամներէն Եղբ. Ժան Հանրօղլու, ու-

րուն եւ վիճակած խաղալ Սելանիկի նախ  
կին ախոյեան Պր. Նէրի հետ:

Հ. Մ. Ը. Մ. ախանը պարտութեան  
մասնած է իր հակառակորդը 6 - 4, 6 - 3  
արդիւնքով:

Նոյն օրը մեր եղբայրը Երկրորդ հան-  
դիպում մը ունեցած է վասնդաւոր հա-  
կառակորդի մը՝ Մէք Ֆանիքըլի հետ, զոր  
նոյնպէս պարտութեան է մասնած 6 - 4,  
6 - 2 եւ 6 - 2 արդիւնքով:

Մեր մարդիկը արժանացած է ամէ-  
նուն գնահատանքին:



ՀԱԼԷՊ

Ի ՊԱՏԻԻ ԵՂԲ. Լ. ԱԲԳԱՐԵԱՆԻ

Հ. Մ. Ը. Մ. ի Հալէպի Մասնաճիւղը  
գեղեցիկ գաղափարն է ունեցած կազմա-  
կերպելու մարզական հանդէս մը, ի պա-  
տիւ Եղբ. Լ. Արգարեանի: Հանդէս տրը-  
ուած է հայ կաթուղիկ Երիտ. Միութեան  
Ակումբին մէջ, հոժ բազմութեան մը ներ-  
կայութեան:

Ուրախ եմք որ մեր եղբայրները իրենց  
այս ձեռնարկով գնահատած են մեր Լեւո-  
նիկը, որ տարիներէ ի վեր — Սուրիա.  
Կիպրոս եւ այլուր — նուիրուած է նոր  
սերունդի ֆիզիքական դաստիարակու-  
թեան, եւ եղած է Հ. Մ. Ը. Մ. ի գաղա-  
փարին ուխտաւոր ղեկավար մը:

« Հ. Մ. Ը. Մ. » ի ԸՆՏԱՆԻԹ

Մեր Մարտէլի եղբայրներէն՝ Լեւոն  
Պաքըրճեան զժրատութիւնը ունեցած է  
կորսնցնելու իր քեսայրը՝ Պ. Նշան Էքիզ  
եան: Մեր անկեղծ ցաւակցութիւնները:



ՓՈՒՍԱՆ ՍՏԱՅԱԳՐԻ

Ստացանք. —

- Պր. Գ. Յովհաննէսեան 25 ֆրանք :
- Պր. Գ. Քէրսէեան 25 :
- Պր. Տիօնեան 25 :
- Պր. Պագնեան 25 :
- Պր. Սիլիմեան 25 :
- Պր. Վ. Աբուլեան 25 :

- Պր. Հ. Ակոնայեան 25 :
- Պր. Ժ. Եաղմուրեան 25 :
- Պր. Մ. Մինասեան (Թաքար Բագար-նրք) 25 :
- Եղբբք. Պալպալեան 25 :
- Եզր. Փափագեան (Մարսէյլ) 250 :
- Պր. Ա. Անէմեան 25 :

ՍՏԱՅԱՆՔ

**ԲԱԶՄԱՎԷՊ :** Հանդիսարան, բանա-սիրական - գրական - գիտական - բարոյական : Հատոր ԴԲ. : Տարեկան բաժնետոմար 60 լիբէր իտալ., 16 ֆր. գուից. : Հասցէ՝ Ս. Ղազար, Վենետիկ :

**ԵՓՐՍՏ :** Անկախ հայաքերթ, ազգային, քաղաքական եւ գրական, 7-րդ տարի : Հասցէ՝ փոստարկղ՝ Թիւ 382, Հալեպ :

**ԱՊՍԳԱՅ :** Քաղաքական եւ հասարակական նրկօրեայ քերթ : Տարեկան բաժնետոմար 70 ֆր. Ֆրանսա եւ գաղութներ Անգլիա, Ամերիկա, Զուիցերիա, Իտա -

լիա, Կիպրոս, Պելնիֆա, Պաղեստին՝ 90 ֆր. : Մնացեալ երկիրները 80 ֆր. :

**ԱՐԵՒ :** Օրաքերթ, քաղաքական, գրական եւ տնտեսական : 19-րդ տարի. Բաժանորդագրութիւն՝ Եգիպտոս եւ Սուտան 150 Ե. դ. : Արտասահման 40 շիլին : Հասցէ՝ փոստարկղ 1060, Գահիթէ (Եգիպտոս) :

**ԱՂԻՔ :** Ազգային, քաղաքական, գրական : Թէհրան (Պարսկաստան) :

**ՀՕԿ :** Օրկան արտասահմանեան Հօկերու, ամսագիր : Գին՝ Ֆրանսա եւ գաղութներ 25 ֆր. : Ամերիկաներ 2 տոլար Ռումանիա, Պուլկարիա 30 ֆր. : Հասցէ՝ 9, ռի Պուրտալու, Փարիզ (9) :

**ԵՂԲ. Գ. ՅԱԿՈՒԵԱՆ** իր երկրորդ բնական այցելութիւնը պիտի տայ Հ. Մ. Ը. Մ. ի Լիօնի, Վիէնի, Վալանսի ու շրջակայի Մասնահիւղերը ֆրանսական հանրապետութեան տարեդարձին առթիւ 14 Յուլիս :

**ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏ ԵՂԲ. Գ. ՅԱԿՈՒԵԱՆ** ի այցելութիւնը ի Մարսէյլ, յաջորդութիւնով :



**Le Gérant : Vasken Andréassian**  
**Imprimerie du Globe, 60, Rue de Provence - Paris**